ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՐԱԿԱԶՄՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Տարին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի առաջին և կարևոր գործերից մեկը հանդիսացավ Մայր Աթոռի թանգարանի վերակազմակերպումը։ Վեհափառի անմիջական հսկողությամբ և կարգադրությամբ կազմվեց հատուկ հանձնաժողով Մայր Աթոռի միաբաններից և Հայրենիքի անվանի գիտնականներից, որոնց թվում պատմական գիտությունների դոկտոր և Երևանի պետական պատմական թանգարանի դիրեկտոր Կարո Ղաֆադարյանը, պատմական գիտությունների դոկտոր Բարգեն Առաքելյանը և ուրիշներ։ Հանձնաժողովը Նորին Վեհափառության նախագահությամբ երկու ամիս տևող աշխատանքներից հետո կարողացավ կազմակերպել Մայր Աթոռի եկեղեցա-պատմական թանգարանը։ Վեհափառ Հայրապետն այդ գործի համար չէր զլանում տրամադրելու իր թանկագին օրերն ու ժամերը։ Նա առավոտից մինչև ուշ երեկո նստած թանգարանում հանձնաժողովի մյուս անդամների հետ, զեկավարում էր աշխատանքները, որպեսզի օր առաջ պատրաստ լինի Մայր Աթոռի թանգարանը և բոլոր ուխտավորների ու այցելուների համար մատչելի դառնան Մայր Աթոռի դարավոր սրբություններն ու պատմական արժեք ներկայացնող սրբազան իրերը, որոնք պատմական հեռավոր անցյալից ժառանգություն են մնացել մեզ։

Թանգարանը բաղկացած է երեք բաժնից, որոնցում տեղավորված են Մայր Աթոռի մի շարք պատմական և նվիրական սրբություններն ու հնագիտական արժեք ներկայացնող իրերը, որոնք դուրս բերվեցին մոռացության մշուշից՝ հերկրպագություն և ի հոգևոր մխիթարություն բարեպաշտ ուխտավորների։

Մայր Աթոռի թանգարանի երեք բաժիններում մոտավոր թվով կա 800 ցուցանմուշ։ Բայց այդ չէ բոլորը։ Վեհափառի ցանկությունն է ավելի ևս մեծացնել թանգարանը և այնտեղ հավաքել զանազան կողմերում ցրված սրբություններն ու հնությունները։

Այժմ համառոտ կերպով ցանկանում ենք նկարագրել Մայր Աթոռի վերակազմված թանգարանը, որի երեք բաժիններում տեղավորված են՝

1. Տրդատ Գ թագավորի արքայական թագի ճակատամասը (4-րդ դար).
2. Բագրատունյաց Հովհաննես-Սմբատ թագավորի բյուրեղյա խաչը (966 թ.).
3. Աշոտ Բ (Երկաթ) թագավորի երկաթյա խաչը իր տուփով (10-րդ դար).
4. Հավուց թառի Ամենափրկիչ Ս. Նշան—փորագրված փայտի վրա, նկարազարդ տուփով (14-րդ դար).
5. Բյուրեղյա խաչ հունարեն արձանագրությամբ (11-րդ դար).
6. Խոտակերաց Ս. Նշան—շինված Պոռչյան էջի իշխանի պատվերով (1300 թ).
7. Ս. Նշանի պահարան—Աստրախանի բարեպաշտ կանանց նվերը Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին (1775 թ.).
8. Խաչեր զանազան տեսակի ու ձևի (13-րդ դարից մինչև մեր օրերը).
9. Պահարան Նոյի տապանի մասունքի—գործ քանաքեռցի Ավետի (1695 թ.).
10. Մասնատուփ՝ Արագածի Ս. Նշան (13—14-րդ դար).
11. Սադաֆեն տուփ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի (1691 թ.).

12. Կանթեղներ, որոնք աչքի են ընկնում իրենց բարձր արվեստով (18-րդ դարից մինչև մեր օրերը).

13. Բուրվառներ 17-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջը).

14. Սկիհներ (17-րդ դարից մինչև մեր օրերը).

15. Ս. Նշանի պահարան—պատվիրված Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի կողմից Մոսկվայում (1795 թ.).

16. Պահարան մասանց, արծաթյա, առաքելոց պատկերներով— Կարին քաղաքի նվերը Մշո Ս. Կարապետին.

17. Մասնատուփ (10—11-րդ դար).

18. Պահարան Ս. Հակոբա Աջի, սաղաֆատ (1780 թ.).

19. Մասնատուփ սյավոնական և հայկական արձանագրությամբ (1689 թ.).

20. Պահարան (13-րդ դար).

21. Ս. Արիստակես հայրապետի Աջը.

22. Ս. Հակոբ Մծբնա հայրապետի Աջը մասունքով, Սաղմոսավանքից (1658 թ.)

23. Ս. Հովհաննես Մկրտչի Աջը—նվեր մահտեսի Նիկողոսից Ս. Կարապետի վանքին.

24. Ս. Թադեոս առաքյալի Աջը մասունքով.

25. Մասնատուփ Ս. Ստեփանոսի նշխարքով (նորոգված 1698 թ.).



Մայր Աթոռի բանգարանի խաչերը

Հնդկահայերի նվիրած վարագույրը Ս. Սարգսի նկարով (1799 թ.)

26. Ս. Հակոբ Մծբնա հայրապետի մասունքի տուփ, Թադեոս առաքյալի և Ստեփանոս նախավկայի մասունքներով (17-րդ դար).

27. Ս. Մեռոնի կաթսա—Թիֆլիսեցի Հակոբի նվերը (1672 թ.).

28. Ս. Մեռոնի կաթսա— Հակոբի, Պետրոսի և ուրիշների նվերը Ս. Էջմիածնին, Կալկաթայից (1841 թ.).

29. Ս. Մեռոնի կաթսա— վանեցիների նվերը Ռշտունյաց Աթոռին (1883 թ.).

30. Ս. Մեռոնի կաթսա— Նոր-Նախիջևանցի Գասպար Հարությունյանի Կարապետ օղլանի հիշատակը Ս. Էջմիածնին (1895 թ.).

31. Ս. Մեռոնի սափոր— Հնդկահայերի նվերը Ս. Էջմիածնին (1815 թ.).

32. Հայրապետական, եպիսկոպոսական և վարդապետական ասաներ և գավազաններ, որոնց մեջ հայտնի են Ղուկաս, Ղազար և Գևորգ Դ կաթողիկոսների, Աբրահամ պատրիարքի և այլ հայտնի ասավածարան վարդապետների գավազանները.

33. Ասավածաշնչեր (տպված 1680 թվից մինչև մեր օրերը).

34. Ձեռագրերի ընտիր նմուշներ, որոնց մեջ արժեքավոր է իր հնությամբ վրաց Կա-



Կոմիտաս վարդապետի շուրջառ և ասաներ, զավազաններ ու խույրեր

լիսարան Կաթողիկոսի 1950 թվի նվերը երանաշնորհ Գեորգ Զ Կաթողիկոսին— սաղմոսարան մագաղաթի վրա.

35. Վարագույրների ընտիր նմուշներ ոսկեծո և գործված պատկերներով՝ մեծ և փոքր չափերի, հայրապետական արծվեզորգեր, սեղանի ծածկոցներ ասեղնագործ և ոսկեթել, որոնց մեջ աչքի է ընկնում հնդկահայերի նվեր վարագույրը (1799 թ.) Ս. Սարգսի պատկերով։ Վարագույրն այնքան մեծ է, որ երեք պատերի վրա է ամրացվել.

36. Հանճարեղ երաժշտագետ Կոմիտաս վարդապետի և Գարեգին վարդապետ Հովսեփյանի (հետագայում Կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո) շուրջառները.

37. Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի շուրջառը— նվեր Ասարխանի հայերից (1807 թ.).

38. Գեորգ Դ կաթողիկոսի անձնական իրերը.

39. Գեորգ Զ կաթողիկոսի օգտագործած եկեղեցական զգեստներն ու անձնական իրերը.

40. Թաղեր, որոնց մեջ աչքի են ընկնում Կարնեցի Հակոբի նվերը; Լիմ անապատի, Մշո Ս. Կարապետի, Տաթևի, Վարագա Ս. Խաչի և վերջապես Հռոմոր Զինասատանի հայերի նվերները Ս. Էջմիածնին և այլ հայկական վանքերին ու եկեղեցիներին.

41. Եպիսկոպոսական խույրեր (15-րդ դարից մինչև մեր ժամանակները).

42. Եմիփորոններ ասեղնագործ և մարգարտաշար (1719 թվականից մինչև մեր օրերը).

43. Ասեղնագործ և մարգարտաշար վականներ և արտախուրակներ (17-րդ դարից մինչև մեր ժամանակները), որոնց մեջ իր պատմական արժեքով աչքի է ընկնում Առաքել Դավրիժեցի պատմագիր վարդապետի մարգարտաշար վակասը.

44. Կաթողիկոսական թանկարժեք կոնքեռներ, ասեղնագործ և մարգարտաշար բազպաններ, փոռուրարներ և ուրարներ.

45. Գոտիների թանկարժեք ճարմանդներ, մարգարտաշար և ականակուռ (1786—1901 թ. թ.).

Այս բոլորից բացի Մայր Աթոռի թանգարանում պահվում են ոսկյա և արծաթյա հին և նոր ականակուռ և մարգարտաշար եկեղեցական սպասներ՝ խաչեր, ավետարաններ, ակիհներ, բուրվառներ, խաչվառներ, զավազաններ, գոտիներ, թաղեր, սաղմոսարաններ, վականներ, եմիփորոններ, շուրջառներ, փոռուրարներ, ուրարներ, բազպաններ, կաթողիկոսական բոլոր, թանկարժեք կոնքեռներ, շապիկներ, ինկամաններ, կաթողիկոսական արծվեզորգեր, վարագույրներ, զանազան աղոթքների հին և նոր դրամներ, մատանիներ, թանկարժեք պանակներ և շքանշաններ։

ԵՂԻՇԵ ԱՐԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ